

Մխիթար Սեբաստացի կրթահամալիր պետական
քոլեջ

«Գրադարանային գործ» բաժին

Դիպլոմային աշխատանք

Թեմա՝ «Գրադարանների ձևավորումն ու
զարգացումը. հին ժամանակներից մինչև մեր օրերը»

*Ուսանող՝ Զարուհի Վարդանյան
Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան*

Երևան 2019

Բովանդակություն

«Գրադարանների ձևավորումն ու զարգացումը. հին ժամանակներից մինչև մեր օրերը»

Ներածություն

Գլուխ 1

Աշխարհի հնագույն գրադարանները

Գլուխ 2

Այլոց փորձի ուսումնասիրություն

- *Բողլեյան գրադարան*
- *Կոնգրեսի գրադարան*
- *Ֆրանսիայի Ազգային գրադարան*
- *Ռուսաստանի պետական գրադարան*
- *Չեխիայի ազգային գրադարան*
- *Չինաստանի հանրային գրադարան*
- *Կանադայի գրադարանն ու արխիվները* (այլոց փորձից, թարգմանական աշխատանք)

Գլուխ 3

Հայաստանի գրադարաններ

- *Հայաստանի Ազգային գրադարան*
- *Խնկո Ապոբ գրադարան*

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Գրադարանը մշակութալուսավորական և գիտաօժանդակ հիմնարկ է, որ նախատեսված է տպագիր արտադրանքի հասարակական օգտագործումը կազմակերպելու համար: Գրադարանների դերն է տպագիր արտադրանքի հավաքումը, պահպանումը, գրքի պրոպագանդան, ընթերցողներին գիրք սպասարկելը, ինչպես նաև ինֆորմացիոն մատենագիտական աշխատանքը: **ԽՍՀՄ**-ում, ըստ նշանակության և գրքային ֆոնդերի կազմի ու աշխատանքի մեթոդի, գրադարանները բաժանվում են երկու հիմնական տեսակի՝

- մասսայական,
- գիտական ու մասնագիտական:

Մասսայական գրադարանների թվին են պատկանում մշակույթի նախարարության կազմում գտնվող քաղաքային ու գյուղական, ինչպես և ձեռնարկությունների, ակումբների, մշակույթի տների գրադարանները: Գիտական և մասնագիտական գրադարանները հիմնականում սպասարկում են գիտության, ժողտնտեսության և մշակույթի տարբեր ճյուղերի գիտնականներին ու մասնագետներին, ապահովում բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների պահանջները, կատարում տեղեկատու-մասնագիտական և գրադարանագիտության վերաբերյալ գիտահետազոտական աշխատանք, մեթոդական-մասնագիտական օգնություն են ցույց տալիս մասսայական գրադարաններին, հրատարակում մատենագիտական և գրադարանագիտական գրականություն: Գիտական գրադարանների թվին են դասվում հանրապետական, ակադեմիաների, համալսարանների, տարբեր ճյուղային մասնագիտացված ձեռնարկությունների, ԳՏԻ-ների, բուհերի գրադարանները:

Ըստ գրականության կազմի՝ գրադարանները լինում են համընդհանուր, բազմաճյուղ և ճյուղային: Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում գրադարանների աշխատանքը անընդհատ բարդանում է: Տպագիր արտադրանքի վիթխարի աճը գրադարանների առաջ դրել է հսկայական թվով հրատարակությունների ընտրության, մշակման, արդյունավետ պահպանման և ընթերցողին արագ ու ճիշտ սպասարկելու պրոբլեմներ: Գիտնականների ու մասնագետների թվի խիստ ավելացմամբ և ամբողջ բնակչության կրթության

մակարդակի բարձրացմամբ մեծանում են ընթերցողների պահանջները գիտական գրականության և մատենագիտական տեղեկատվության նկատմամբ:

Գլուխ 1

Աշխարհի հնագույն գրադարանները

Աշխարհում ամենահին գրադարանը հայտնաբերվել է 1849-1851 թվականներին՝ բրիտանացի հնէաբան Օսթին Հենրի Լեյարդի և Հորմուզ Ռասամի կողմից՝ Եփրատի ափին անցկացված պեղումների ժամանակ: Սա համարվում է գիտությանը հայտնի բոլոր ժամանակների ու ազգերի հնագույն գրադարանը: Աշուրբանապալ արքան ցանկացել էր սարքել մի վայր, որտեղ կհավաքեր մարդկությանը հայտնի բոլոր գիտելիքական նյութերը: Հավաքածուն հիմնականում ներառում է շումերական և բաբելոնյան տեքստեր: **Դա Ասորեստանի Աշուրբանապալ արքայի գրադարանն է (Լոնդոնի բրիտանական թանգարան, Ք.ա. 7-րդ դար):**

Սուրբ Եկատերինայի վանքի գրադարանը (Եգիպտոս, Սինայ, 548-565թթ.): Այս վանքը գտնվում է եգիպտական Սինայ լեռան ստորոտին: Այս գրադարանում պահվում են 3304 ձեռագիր, 5000 գիրք և 1700 գլանակ: Այս գրադարանի հավաքածուն իր պատմական նշանակությամբ զիջում է թերևս միայն Վատիկանի առաքելական գրադարանին: Հավաքածուի աշխատությունները գրված են հունարեն, արաբերեն, վրացերեն, հայերեն, ղպտերեն, եթովպերեն և սլավոնական լեզուներով: Ամենահայտնի ձեռագիրը, որ պահպանվում է պատմական այս կոթողում, այսպես կոչված «Սինայական կողեքսն» է, որ 4-րդ դարում է ստեղծվել: Բացի հնագույն ձեռագրերի իր երևելի հավաքածուից՝ այս վանք-գրադարանն ունի նաև հին ու խիստ արժեքավոր սրբապատկերների հավաքածու:

Չեխիայի Հանրապետության Ազգային գրադարան (Պրահա, 1366թ.): Սա ոչ միայն աշխարհի հնագույն գրադարաններից մեկն է, այլև աշխարհի խոշորագույն գրադարաններից է, որը տարեկան մինչև 1 միլիոն ընթերցող է ունենում: Այն հիմնադրվել է Պրահայի համալսարանի հիմնադրման առնչությամբ և այսօրվա դրությամբ ունի 6 միլիոն նմուշ, որոնց թիվն ամեն տարի աճում է 70 հազարով: Բացի դրանից՝ գրադարանի կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրերը ստանում են UNESCO-ի աջակցությունը:

Ավստրիայի Ազգային գրադարան (Վիեննա, 1368թ.): Տեղակայված լինելով Հաֆրուրգ պալատում, որը ժամանակին Հափսուրգների արքայատոհմի նստավայրն էր, այս պատմամշակութային կոթողում կուտակված են ավելի քան 7.5 միլիոն գրքեր, հնագույն պապիրուսներ, քարտեզներ, գլոբուսներ, նկարներ և լուսանկարներ, հայտնի երաժիշտների պարտիտուրաներ և այլն: Այս գրադարանը հայտնի է նաև նրանով, որ

ունի հնագույն ձեռագրերի բնօրինակների հսկայական հավաքածու, որը հաշվվում է ավելի քան 8000 նմուշ:

Տրանսիայի Ազգային գրադարան: Այս գրադարանը հիմնադրվել է դեռ Կառլոս 5-րդ Իմաստունի ժամանակ, բայց այն կորցրել է իր պաշարների զգալի մասը, քանի որ արքայի բարեկամները գրքերը չվերադարձնելու բնավորություն ունեին: Այնպես որ, Լյուդովիկոս 11-րդը ստիպված էր գրեթե զրոյից սկսել վերստեղծել այս գրադարանի պաշարները, և պետք է խոստովանել, որ դա նրան հաջողվել է: Ներկայումս այս գրադարանում պահվում են ձեռագիր ու տպագիր աշխատություններ՝ տարբեր հնադարյան վանքերից, գրքեր՝ հեղափոխության ժամանակաշրջանից, լուսավորչականների աշխատությունների, ինչպես նաև արտասահմանից ուղարկված բազմաթիվ նմուշներ: Այսօր գրադարանում պահվում է 30 միլիոն ձեռագիր ու տպագիր նմուշ:

Վատիկանի Առաքելական գրադարան (1475թ.): Այս հրաշքի հիմնադիրները համարվում են Նիկոլայ 5-րդ և Սիքստ 4-րդ Հռոմի Պապերը: Այս հրաշալի ու հարուստ գրադարանում պահվում են անգին ձեռագրեր՝ միջնադարյան ու Վերածննդի դարաշրջանից: Հատուկ այս գրադարանի համար փնտրողական արշավանքներ են կազմակերպվել աշխարհի բոլոր կողմերով: Գրադարանում պահպանվում են միլիոնավոր ձեռագիր և տպագիր աշխատություններ՝ Ցիցերոնից մինչև ժամանակակից հեղինակներ: Բնականաբար աշխատությունների մեծ մասը կրոնական բնույթի է: Գրադարանին կից գործում է Վատիկանի գրադարանավարների դպրոցը և ձեռագրերի ռեստավրացիոն կենտրոն: Ամեն օր այս գրադարանի պահոցներ կարող են այցելել 150 գիտնական ու մասնագետ:

Մալթայի Ազգային գրադարան: Այս գրադարանը հիմնադրվել է Սուրբ Հովհաննեսի միաբանության 48-րդ Մեծ մագիստրոս Կլոդ դե լա Սինգլի կողմից, որի հրամանով մահացած բոլոր ասպետների գրքերը դառնում էին միաբանության սեփականությունը: Մալթայի գրադարանում առկա են բազմաթիվ հազվագյուտ բիրլիոգրաֆիական նմուշներ: Այստեղ է պահպանվում 1107 թվականին թողարկված հրամանագիրը, որով Կառլոս կայսրը Երուսաղեմի արքա Բալդուին 1-ինի ասպետների ազնվական ծագումն է հաստատում, ինչպես նաև Միաբանության ժողովների սղագրությունները: 1812 թվականից բաց է այցելությունների համար:

Բավարական պետական գրադարան (1558 թ.): Այս հին գրադարանը հիմնադրվել է Վետտելսբախյան դուքս Ալբերխտ 5-րդի կողմից: 1663 թվականին Բավարիայում օրենք ընդունվեց, որով բոլոր հրատարակչություններին պարտադրվում էր ցանկացած տպագրված աշխատության երկու նմուշ հանձնել այս գրադարանին: Ի դեպ, այդ օրենքը գործում է մինչ օրս: Ցավոք սրտի, գրադարանի շենքը 85 տոկոսով ավիրվեց Երկրորդ աշխարհամարտի տարիներին, և 500,000 հատոր ոչնչացվեց, բայց չնայած դրան՝ այս գրադարանը մինչ օրս էլ համարվում Եվրոպայի խոշորագույն գրքերի հավաքածուն ունեցող գրադարաններից մեկը: Գրադարանը հայտնի է նաև նրանով, որ մասշտաբային աշխատանքներ է ձեռնարկում հին ձեռագրերի և աշխատությունների թվայնացման ուղղությամբ:

Բելգիայի Արքայական գրադարան (1559 թ.): Ազգային գիտական գրադարանը հիմնադրվել է Ֆիլիպ 2-րդի հրամանով և ներկայումս ունի 8 միլիոն գիրք, ձեռագիր, նկար և նումիզմատական հսկայական հավաքածու: Գրադարանի հիմնական նպատակը եղել և մնում է հավաքել բոլոր բելգիական հրատարակումները, ինչպես նաև բելգիացի բոլոր հեղինակների աշխատությունները, որոնք հրատարակվել են արտասահմանում: Այս գրադարանում, սակայն, կան հարյուր հազարավոր արտասահմանյան գրքեր ևս, և այն բաց է այցելուների համար, այդ թվում նաև ուսանողների:

Օքսֆորդյան համալսարանի Բողիլանյան գրադարան(1602 թ.): Այս գրադարանը կրում է սրբ Թոմաս Բողլու անունը, ով ժամանակին հայտնի ու հաջողակ մարդ էր: Հայտնի էր նրանով, որ հավաքում էր հին ձեռագրեր: Մեկ այլ վարկածի համաձայն՝ այս գրադարանի հիմնադիրը եպիսկոպոս Թոմաս դե Կոբեմն է եղել: Հենց նրա ջանքերով է համալսարանը սկսել գրքերի պաշարներ կուտակել: Սկզբում դրանք շղթաներով էին ամրացնում գրադարակներին, որպեսզի դրանք չգողացվեին: Այս գրադարանը Եվրոպայի հնագույն գրադարաններից մեկն է:

Գլուխ 2

Այլոց փորձի ուսումնասիրություն

Բողլեյան գրադարան: Բողլեյան գրադարան, Օքսֆորդի համալսարանի հիմնական հետազոտական գրադարան: Բողլեյան գրադարանը Եվրոպայի ամենահին գրադարաններից է, իսկ Բրիտանիայում Բրիտանական գրադարանից հետո մեծությամբ երկրորդն է՝ իր 11 միլիոն նմուշով: Գրադարանը գլխավորապես գործում է որպես գրադարան-ընթերցասրահ, և փաստաթղթերը հիմնականում չեն կարող դուրս հանվել ընթերցասենյակներից: Բողլեյան գրադարանը զբաղեցնում է Բրոադ Սթրիթի մոտ գտնվող 5 շենք, որոնց կառուցման տարեթվերն ընդգրկում են ուշ միջնադարյանից՝ Դուքս Համֆրեյի գրադարանից մինչև 1930-ականների Նոր Բողլեյանը: 19-րդ դարից սկսած մի քանի ստորգետնյա պահոցներ են կառուցվել այդ շենքերի տակ: Այսօր Բողլեյանը նաև ներառում է մի քանի պահեստային տարածքներ, որոնք շենքի տարածքից դուրս են գտնվում: Չնայած Բողլեյան գրադարանի պատմությունը սկսվում է 1602 թ. , նրա արմատներն էլ ավելի հեռուն են գնում: Առաջին հատուկ կառուցված գրադարանը, որը հայտնի է եղել Օքսֆորդում, հիմնադրվել է Թոմաս Քոքհամի՝ Ուորսեսթորի եպիսկոպոսի կամքով (մահացել է 1327 թ.): Շղթայված գրքերի այս փոքրիկ հավաքածուն տեղակայված էր Համալսարանի Սուրբ Կույս Մարիամի եկեղեցու հյուսիսային մասից վեր՝ Հայ Սթրիթում: Այս հավաքածուն կայուն ձևով շարունակում էր աճել, իսկ երբ 1435-1437 թթ. Համֆրեյը՝ Գլուսթերի դուքսը (Անգլիայի Հենրի 5-ի եղբայրը) նվիրեց մեծ թվով ձեռագրեր, տարածքը այլևս չէր բավականացնում և նոր շենքի պահանջ առաջացավ: Վերջիվերջո Աստվածության դպրոցի վերևում մի հարմար սենյակ կառուցվեց, որն ավարտվեց 1488 թ: Այս սենյակը շարունակվում է կոչվել Դուքս Համֆրեյի գրադարան: Օքսֆորդի համալսարանի Բողլեյան գրադարանում գործում է հայկական հազվագյուտ ձեռագրերի, տպագիր գրականության, հայ մշակույթի գանձերի ցուցահանդես, որը կազմում է Բողլեյան գրադարանի հարուստ հավաքածուի մի մասը: Բողլեյան նշանավոր գրադարանն առաջին անգամ է ցուցադրության հանել հայկական հավաքածուն, որի ամենահին ձեռագիրը թվագրվում է 1635 թվականին: Ցուցահանդեսը կրում է «Հայաստան. հարակայուն մշակույթի ձեռագրերը» և նվիրված է հայ ժողովրդի 2500-ամյա պատմությանն ու մշակույթին:

Կոնգրեսի գրադարան: Կոնգրեսի գրադարան (անգլ.՝ The Library of Congress), ԱՄՆ ազգային գրադարան, աշխարհի խոշորագույն գրադարան: Գտնվում

է Վաշինգտոնում: ԱՄՆ Կոնգրեսի գիտական գրադարանն է, սպասարկում է կառավարական մարմիններին, հետազոտական կենտրոններին, գիտաշխատողներին, մասնավոր, արտադրական ընկերություններին, դպրոցներին: Գրադարանի հատուկ բաժինը զբաղվում է հեղինակային իրավունքների (անգլ.՝ copyright) ձևակերպմամբ. այն կարելի է ձևակերպել համացանցում՝ լրացնելով Կոնգրեսի գրադարանի համապատասխան ձևաթուղթը: Հիմնադրվել է 1800 թվականի ապրիլի 24-ին, երբ ԱՄՆ նախագահ Ջոն Ադամսը ստորագրեց հրաման մայրաքաղաքը Ֆիլադելֆիայից Վաշինգտոն տեղափոխելու մասին: Օրենքն ուներ կետ, որով 5,000 դոլար (այն ժամանակ դա զգալի գումար էր) տրվում էր Կոնգրեսին անհրաժեշտ գրքերի ձեռքբերման և դրանց պահպանման համար համապատասխան շինություն ստեղծելու մասին: Օրենքը նշում էր նաև գրադարանի գործառույթները, որի համաձայն՝ գրադարանից կարող էին օգտվել միայն նախագահը, փոխնախագահը, Սենատի և Ներկայացուցիչների պալատի (Կոնգրես) անդամներ: Այդ պատճառով գրադարանն անվանվեց Կոնգրեսի գրադարան: Գրադարանի նախնական ֆոնդը ուներ 740 գիրք և Ամերիկյան ներկայացնող աշխարհագրական 3 քարտեզ՝ գնված Լոնդոնում: Հաջորդ նախագահը՝ Թոմաս Ջեֆերսոնը, որը նախագահելու իրավունք է ստացել 1801 թվականի մարտի 4-ին, սկսեց լրջորեն զբաղվել գրադարանի ֆոնդով, դերով և նշանակությամբ: Նրա օրոք գրադարանի ֆոնդը զգալիորեն արագ մեծացավ: Ութ տարի անց նախագահի պաշտոնն ստանձնեց Ջեյմս Մեդիսոնը, որին ծանր ժամանակաշրջան բաժին հասավ. սկսվեց 1812-1814 թվականների անգլո-ամերիկյան պատերազմը: Պատերազմի ժամանակ՝ 1814 թվականի օգոստոսին, Վաշինգտոնը գրեթե ամբողջովին այրվել էր անգլիացիների կողմից: Այրվել էր և Կապիտոլիումը, որտեղ էլ գտնվում էր գրադարանը իր մեծարժեք գրքերով: Մայրաքաղաքը բրիտանական զորքերից ազատագրելուց հետո Մեդիսոնը հրամայեց վերականգնել գրադարանը: Նախկին նախագահ Ջեֆերսոնը, որը մոլի գրքասեր էր, Կոնգրեսին առաջարկեց ձեռք բերել իր անձնական հավաքածուն՝ 6,487 տարալեզու հատորներից, որ նա հավաքել էր մոտ կես դար, և որին հավասարը այդ ժամանակ չկար ԱՄՆ-ում: Ամերիկյան ընդունեց այդ առաջարկը: Գործարքի արժեքը կազմեց 23,940 դոլար: Այդ ժամանակներից «Կոնգրեսի գրադարան» անվանումը դարձավ համահունչ «Ջեֆերսոնի գրադարան» անվանը: 1851 թվականին գրադարանն ապրեց երկրորդ սարսափելի

հրդեհը, որի ժամանակ ոչնչացվեց Թոմաս Ջեֆերսոնից գնված գրքերի մեծ մասը, գրքերի ողջ ֆոնդի երկու երրորդը՝ մոտ 55,000 գիրք: Միայն մեկ տարի անց պետբյուջեից տրվեց 168,700 դոլար՝ գրադարանը վերականգնելու համար: Այդ միջոցների առյուծի բաժինն օգտագործվեց շինարարական աշխատանքների համար: 1850-ական թվականներին Կոնգրեսի գրադարանից օգտվելու իրավունք ձեռք բերեցին նախարարներ, որոշ կազմակերպությունների ղեկավարներ, Գերագույն դատարանի անդամներ, քաղաքական կուսակցությունների՝ հարգանք վայելող անդամներ, ճանաչված գիտնականներ ու գրողներ, լրատվական խոշոր ընկերությունների լրագրողներ: 1870 թվականին, Կոնգրեսի գրադարանի ղեկավար Էյնսուորթ Ռենդ Սպոֆորդի ջանքերի շնորհիվ, կառավարական մակարդակով ընդունվեց հրաման, ըստ որի ԱՄՆ-ի տարածքում լույս տեսած ցանկացած հրատարակությունից մեկ օրինակ պարտադիր փոխանցվում է Կոնգրեսի գրադարանին: Օրենքով ամրագրվեց նաև գրադարանի՝ պետբյուջեից դրամական միջոցների ընդունման և ծախսման կարգը: Ընդունվեց մասնավոր անձանց, ընկերությունների, հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, գրադարանին ֆինանսապես կամ գրքերի նվիրատվությունների ձևով աջակցողների խրախուսման կարգ:

Հերբերտ Պատեներ, որ ղեկավարել է գրադարանը 1899-ից 1939 թվականները, մշակեց գրքերի դասակարգման հարմար համակարգ, իսկ իր ղեկավարության վերջին տարիներին բացվեց երկրորդ՝ հատուկ Կոնգրեսի գրադարանի համար կառուցված շենքը: Մասնաճյուղը ստացավ գրադարանի հիմնադրի՝ Ջոն Ադամսի անունը: Նոր շենքի համար տրամադրվել էր 6,500,000 դոլար: Այն գտնվում է Թոմաս Ջեֆերսոնի անվան «գիտելիքների պալատի» անմիջական հարևանությամբ: 1907 թվականին գրադարանը 40,000 դոլարով ձեռք բերեց ռուս առևտրական գրքասեր Գ. Յուդինի անձնական գրադարանը, որ պարունակում էր 81,000 օրինակ գիրք և ամսագիր՝ հիմնականում Ռուսաստանին վերաբերող: Այդ ժամանակներից այն Ռուսաստանի տարածքից դուրս գտնվող ռուսալեզու ամենամեծ հավաքածուն է: 1939-ից 1944 թվականը գրադարանը ղեկավարել է Արչիբալդ Մաքլիշը, 1945-ից 1953 թվականը՝ Լյուիեր Էվանսը, 1954-ից 1974 թվականը՝ Քուինսի Մամֆորդը, իսկ 1987-ից 1987 թվականը՝ Դենիել Բուրստինը: 1980 թվականին կառուցվեց Կոնգրեսի

գրադարանի երրորդ՝ իր ծավալով ամենամեծ շենքը, որը ստացավ Ջեյմս Մեդիսոնի անունը: Մեդիսոնի շենքում պահվում են թերթեր, ամսագրեր՝ աշխարհի շատ լեզուներով:

Ֆրանսիայի Ազգային գրադարան: Ֆրանսիայի Ազգային գրադարան (ֆր.՝ *Bibliothèque nationale de France*, կրճատ՝ *BNF*), գրադարան Փարիզում, ֆրանսալեզու գրականության ամենահարուստ հավաքածուն աշխարհում: Եվրոպայի ամենահին գրադարաններից է, Ֆրանսիայի ամենամեծ գրադարանը, աշխարհի ամենամեծ գրադարաններից մեկը: Գրադարանն ունի 2.700 աշխատակից, որից 2.500-ը աշխատում են շուրջօրյա: Գրադարանի հիմնական պահոցը գտնվում է Սենայի ձախ ափին՝ Փարիզի 13-րդ շրջանում. այն կրում է Ֆրանսուա Միտտերանի անունը: Գրադարանի առավել արժեքավոր հավաքածուները՝ ձեռագրերը, հնագիտական արժեք ներկայացնող տարբեր իրերը, պահվում են Ռիշելյե փողոցի պատմական շենքում՝ կառուցված 17-19-րդ դարերում: Ֆրանսիայի ազգային գրադարանը Եվրոպայում հնագույններից է: Այն երկար ժամանակ եղել է Ֆրանսիայի միապետների անձնական սեփականությունը: Տարբեր ժամանակներում գրադարանն ունեցել է տարբեր անուններ՝ թագավորների, արքայական, ազգային, կայսրական և վերջապես նորից ազգային: Վաղ շրջանի հավաքածուներ

Դեռևս Պիպին Կարճահասակ արքան ունեցել է ձեռագրեր: Կառլոս Մեծը Աախենում հիմնել է գրադարան՝ իր ժամանակների համար բավական նշանակալի: Արքայի մահից հետո, սակայն, այն վաճառվել է: Լյուդովիկոս 9-րդը կրկին ստեղծում է բավական մեծ գրադարան, որը կտակել է հոգևոր չորս համայնքներին:

Հավաքածուի իսկական հիմնադիրը Շառլ 5-րդն է (1364-1380), որը գրադարան հիմնեց ոչ միայն իր, այլև գիտնականներին աշխատելու հնարավորություն ընձեռելու համար: Նա ոչ միայն գնում և արտագրել էր տալիս ձեռագրեր, այլև թարգմանել է տալիս որոշակի գրականություն «թագավորության և քրիստոնեական ողջ աշխարհի բարօրության համար»: 1367-1368 թվականներին գրադարանը թագավորի հրամանով տեղափոխվել է Լուվրի պալատի աշտարակ (tour de la Fauconnerie): 1373 թվականին կազմվել է գրականության ցանկը, որը լրացվել է 1380 թվականին: Այս գրադարանը խիստ տուժել է նրանից, որ թագավորի ազգականները այնտեղից վերցրել են գրքեր և

չեն վերադարձրել. արդյունքում 1.200 ձեռագրից մեզ է հասել 20-րդ մասը միայն: Քանի որ այդ հավաքածուից գրեթե ոչինչ չէր մնացել, Լյուդովիկոս 11-րդը ստիպված էր գրեթե կրկին հիմնել արքունական գրապահոց: Լյուդովիկոս 12-րդը Լուվրի գրադարանը տեղափոխում է Բլուա և միացնում այն գրադարանին, որ հիմնել էին իր պապն ու հայրը, Օռլեանի դուքսերը: Նա ձեռք է բերում նաև Միլանի դքսության հարուստ հավաքածուն, Պետրարկայի գրքերի մի մասը, Լյուդովիկ դե Բրյուժի գրքերի հավաքածուն: Նրան հաջորդած Ֆրանցիսկ 1-ին արքան արքայական գրադարանին է միացնում իր անձնական գրադարանը: Նա սահմանում է թագավորական գրադարանի գլխավոր գրադարանավարի, նրա օգնականների, կազմարարների պաշտոնները: Գրքերի քանակը համարելու համար արքան գրքեր է ձեռք բերում ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս. մի քանի կիրթ պալատականների ուղարկելով Իտալիա՝ նա պատվիրում է Հռոմում և Վենետիկում գնել հունական ձեռագրեր կամ դրանց կրկնօրինակները, ինչ որ կարող են հայթայթել: Ֆրանցիսկոս 1-ինի համար ընթերցելը կյանքի կարևոր մաս է եղել. հաճախ լինելով ուղևորությունների մեջ՝ նա իր հետ վերցնում էր գրքեր: 1523 թվականին, նրա հրամանի համաձայն, ֆրանսիական բոլոր հրատարակիչները և գրավաճառները պարտադիր կերպով Բլուա պիտի հասցնեին հրատարակված յուրաքանչյուր գրքից մեկական օրինակ՝ անկախ նրանից, թե որ լեզվով է տպագրվել: 1544 թվականին թագավորական գրադարանը Բլուայից տեղափոխվում է Ֆոնտեբլո: Այդ ժամանակ գրադարանում հաշվվում էր 1.500 հատոր գիրք. այն ամենահարուստ գրադարաններից մեկն էր Եվրոպայում: Երկու տարի անց թագավորական գրադարանը բաց է դառնում այցելուների համար:

Ֆրանցիսկի որդին՝ Հենրի 2-րդը, մեծացնում է թագավորին պարտադիր տրվող գրքերի օրինակների քանակը՝ դարձնելով երկու: Շառլ 9-րդի թագավորելու գահակալության վերջում արդեն՝ 1560-ական թվականներին, գրադարանը 3.560 գրքերով տեղափոխվում է Փարիզ:

Լյուդովիկոս 13-րդի օրոք գրադարանը արքայի սեփականությունն էր և կոչվում էր «արքայի գրասենյակ» (Cabinet du roi): 1622 թվականին տպագրվում է գրադարանի առաջին տեղեկատուն:

Լյուդովիկոս 14-րդը գրադարանը կրկին դարձնում է հանրային՝ բացելով այն այցելուների համար: Նրա թագավորության օրոք գրադարանը հարստանում է մեծ

արժեք ներկայացնող գրքերի նվիրատվության և նոր ձեռք բերված գրքերի հաշվին: Այս շրջանի կարևորագույն ձեռքբերումներից են 9.000 հատոր հավաքածուն, 260 ձեռագրերը, որ նվիրել են Դյուպյուի եղբայրները, Գասթոն Օռլեանցու նվիրած հավաքածուն, որ պարունակում էր գրքեր, ձեռագրեր, շքանշաններ, մանրանկարչական գործեր, նկարներ, կոմս դե Բետյունի նվիրած հավաքածուն՝ 1923 հատոր պատմական փաստաթղթեր: 1669 թվականին ձեռք է բերվում բժիշկ Ժակ Մենտելի գրադարանը, որ պարունակում էր 10.000 գիրք և 136 ձեռագիր: 1715 թվականին գրադարանը նվեր է ստանում Գենիերի (Gaignières) նշանավոր հավաքածուն:

Գրադարանը ղեկավարում էր ֆինանսների նախարար Ժան Բատիստ Կուլբերը, ով գրքերի մոլի սիրահար էր և հավաքորդ: Նա արտասահման էր ուղարկում գիտնականների, որ ձեռք բերեն նոր գրքեր: Այդպիսով Ֆրանսիա են բերվում արժեքավոր քաղմաթիվ գրքեր, ձեռագրեր Հունաստանից, Եգիպտոսից, Պարսկաստանից, Կոստանդնուպոլսից, Իտալիայից, Պորտուգալիայից, Շվեդիայից և այլ երկրներից ու քաղաքներից: Լյուդովիկոս 15-րդի գահակալության ժամանակ գրադարանը ձեռք է բերում գրքերի և ձեռագրերի ևս քսան հավաքածու, որոնցից նշանակալից էին Կուլբերի գրադարանը՝ 6.645 հին ձեռագրերով, և եպիսկոպոս Պիեռ Յուելի գրադարանը: Արևելքի հետ ունեցած առևտրական կապերի զարգացման շնորհիվ՝ գրքեր էին ձեռք բերվում և այնտեղից. այսպես՝ 1723 թվականին հնդկական առևտրական ընկերությունը ուղարկում է չինալեզու մոտ 1.800 գիրք:

Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ ազգային կոնվենտի որոշումով գրադարանը ազգայնացվում է: Ինչպես թագավորական այլ հաստատություններ, այն ևս վերանվանվում է ազգային: Այս շրջանում գրադարանը անհաշիվ գրքեր է ստանում՝ շնորհիվ շատ վանքերի, արտագաղթած ազնվականների նվիրատվությունների: Դրանցից ակնառու էին Մեն-ժերմեն դե Պրե աբբայության, Սորբոնի հավաքածուները: Նշանակալից էր ֆրանսիացի զորավար Շառլ Լաբեդուայերի՝ 10.000 գրքից բաղկացած հավաքածուն, որ վերաբերում էր ֆրանսիական հեղափոխությանը, Վոլտերին (1996 հատոր), Միշել դը Մոնտենին (1440 հատոր):

1854 թվականից հետո գրադարանի աճող ֆոնդը պահանջում էր նոր շինություններ: Ֆրանսուա Մանսարի նախագծով 17-րդ դարում կառուցված գլխավոր

մասնաշենքի մոտ 1868 թվականին Անրի Լաբրուստի նախագծով կառուցվում է նոր շենք: Լաբրուստի մահից հետո շինարարական աշխատանքները չեն ընդհատվում. հետագայում կառուցվում են Մեծ աստիճանը և Օվալաձև սենյակը՝ ըստ Ժան-Լուի Պասկալի նախագծի: Գրքերի թվայնացման հնարավորությունը բացահայտելուց հետո Ֆրանսիայի ազգային գրադարանը աշխարհում առաջիններից մեկը թվայնացրեց առավել պահանջված ֆոնդերը՝ տեղադրելով դրանք համացանցում: 2011 թվականի ապրիլի տվյալներով «Գալլիկա» առցանց գրադարանը ընթերցողներին առաջարկում էր մոտ 1.400.000 թվայնացված փաստաթուղթ:

Գրադարանը նաև մասնակցում է Quaero հետազոտական ծրագրին, որն ուղղված է մեքենական թարգմանությանը և լեզվական ճանաչողությանը (ծրագիր, որով թվայնացվում են հնչյունական ազդակները):

Ռուսաստանի պետական գրադարան: Ռուսաստանի պետական գրադարան (ռուս.՝ Российская государственная библиотека), պետական գրադարան Մոսկվայում: Համարվում է Եվրոպայի և աշխարհի խոշորագույն գրադարաններից, գրադարանագիտության, գրքի պատմության, մատենագիտության բնագավառների ԳՀ առաջատար հիմնարկ: Հիմնվել է 1862 թվականի հուլիսի 1-ին, ընդգրկված է Ռուսականցյան հանրային թանգարանի կազմում: Կազմավորման սկզբից ստանում է հայրենական հրատարակությունների պարտադիր օրինակներ (մինչև 1922 թվականը՝ 1, 1922-1944 թվականներին՝ 2, 1945 թվականից՝ 3 օրինակ): 1925 թվականից կոչվել է Վ. Ի. Լենինի անվան ԽՍՀՄ գրադարան, 1992 թվականից՝ Ռուսաստանի պետական գրադարան: Գրադարանի ընթերցողներից են եղել Լև Տոլստոյը, Ֆեոդոր Դոստոևսկին, Դմիտրի Մենդելեևը, Կոնստանտին Ցիպկովսկին, Կլիմենտ Տիմիրյազևը, Անտոն Չեխովը, Վալերի Բրյուսովը և ուրիշներ: 1893 թվականին և 1897 թվականին գրադարանի ընթերցասրահում աշխատել է Վ. Ի. Լենինը, 1919-1921 թվականներին եղել է բաժանորդ: 1924 թվականին Ռուսականցյան գրադարանը վերանվանվել է Վ. Ի. Լենինի անվան ռուսական, 1925 թվականի փետրվարի 6-ին՝ Վ. Ի. Լենինի անվան ԽՍՀՄ պետական գրադարան: 1945 թվականին պարզևատրվել է Լենինի շքանշանով: Լենինի պետական գրադարանի ֆոնդերում 1982 թվականին եղել է 11,7 միլիոն գիրք,

10,1 միլիոն ամսագիր, աշխարհի 200 (ԽՍՀՄ ժողովուրդների 89) լեզուներով 397 հազար թերթերի տարեկան հավաքածու, 330 հազար միավոր ձեռագիր, 1,3 միլիոն միավոր քարտեզ, 405 հազար միկրոժապավեն: Գրադարանն ունի 22 ընթերցասրահ: Լայն կապերի մեջ է արտասահմանյան գրապահոցների և գրքի գործերով զբաղվող կազմակերպությունների հետ: Գրադարանի հին շենքում (նախկինում՝ Պաշկովի տուն, կլասիցիզմ, 1784-1786, ճարտարապետ Վասիլիյ Բաժենով) տեղավորված են ընդհանուր և պատանիների ընթերցասրահները: 6 նոր մասնաշենքերը (այդ թվում 9 հարկանի գրապահոցը) կառուցվել են 1928-1958-ին (ճարտարապետներ՝ Վ. Գ. Գելֆրեյս, Վ. Ա. Շչուկո և ուրիշներ) և գլխավոր մուտքի կողմից միավորված են բարձր մույթավոր պորտիկով: Գրադարանի ճակատները հարդարված են քանդակներով:

Չեխիայի Ազգային գրադարան: Չեխիայի Հանրապետության Ազգային գրադարան, Չեխիայի կենտրոնական գրադարան: Ենթարկվում է Չեխիայի Մշակույթի նախարարությանը: Գլխավոր մասնաշենքը գտնվում է պատմական Կլեմենտիումի շենքում՝ Պրահայում, որտեղ պահպանվում է նրա ամբողջ հավաքածուի կեսը: Հավաքածուի մյուս մասը պահվում է Գոստիվարժ շրջանում: Ազգային գրադարանը հանդիսանում է Չեխիայի ամենամեծ գրադարանը: Նրա ֆոնդերում հաշվարկվում է շուրջ 7 միլիոն օրինակ, այդ թվում 4200 ինկունաբուլա: Գրանցված ընթերցողների թիվը հասնում է 60000-ի: Բացի չեխական տեքստերից՝ այստեղ պահվում են նաև գրքեր Թուրքիայից, Իրանից, Հնդկաստանից: Գրադարանում պահվում են նաև Պրահայի Կարլով համալսարանի գրքեր: Գրադարանը միջազգային ճանաչում ստացավ 2005 թվականին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Աշխարհի հիշողություն ծրագրով հին տեքստերի թվային թարգմանությունների համար ստանալով Jikji Prize առաջին կարգի մրցանակ: Նախագիծը, որը սկսվել էր 1992 թվականին առաջին 13 տարում իրականացրեց 1700 փաստաթղթի թվայնացում:

Չինաստանի հանրային գրադարան: Չինաստանի Տյանցզին քաղաքում յուրահատուկ հանրային գրադարան է բացվել: Այնտեղ կա ավելի քան 1,2 մլն գիրք: Երևակայությունն առավել զարմացնում է գրադարանի ֆուտուրիստական շենքը, որի նախագիծը մշակել է նիդերլանդական MVRDV ընկերությունը: Գրադարանի 22 700 քառ.մետր մակերեսով ինտերիերը կատարված է վիթխարի աչքի ձևով: Գրադարակները

մեծ լուսարձակող գնդի շուրջը դասավորված են կասկադով: Շենքը 5 մակարդակ ունի: Ստորգետնյա տարածքներում գրապահոցն է: Առաջին և երկրորդ հարկերում գրադարակների հետևում տեղադրված են ընթերցասրահները եւ հանգստի հարմարավետ գոտիները: Վերին մակարդակներում կոնֆերանսի դահլիճներն են, համակարգչային դասարանները, գրասենյակները: Գրադարանի շինարարությունը, որը մեծ մշակութային ծրագրի մասն է, 3 տարի է տևել:

Կանադայի գրադարանն ու արխիվները (*այլոց փորձից, թարգմանական աշխատանք*)

Canada is home to the world's fourth largest library, the Library and Archives of Canada, which is maintained directly by the federal government of the country. The institution is assigned the immense task of preserving Canada's heritage documentaries and making it available to the people of the country. The current collection includes nearly 20 million books, 24 million photographs, private and government archives, aboriginal magazines, non-fiction and fiction films, Canadian periodicals, and more. Some of the most prized items of the library include the proclamation of the Canadian Constitution Act, a 1st Century book by historian Flavius Josephus, a chair belonging to Glenn Gould, and the British North America Act. The Library and Archives of Canada was formed in 2004 by the amalgamation of the functions performed by the National Library of Canada and the National Archives of Canada and reports directly to the Parliament of the country.

Կանադան հայրենիքն է աշխարհի չորրորդ ամենամեծ գրադարանի, Կանադայի գրադարանը և արխիվները օժանդակվում են հենց երկրի ֆեդերալ կառավարության կողմից: Հաստատությունը, իր առջև առաջադրանք է դրել պահպանելու Կանադային ժառանգաբար հասած փաստաթղթերը, և այն հասանելի դարձնել երկրի ժողովրդին: Ընթացիկ հավաքածուն ներառում է 20 մլն գիրք, 24 մլն լուսանկար, մասնավոր և կառավարական պահոցներ, տեղական ամսագրեր, գեղարվեստական և ոչ գեղարվեստական ֆիլմեր, կանադական պարբերականներ և այլն: Գրադարանի մի քանի ամենագնահատված առարկաները իրենց մեջ ներառում են կանադական սահմանադրության հռչակագիրը, պատմաբան Ֆլավյուս Ջոզեֆուսի առաջին դարին պատկանող գիրքը, Գլենգուդին պատկանող աթոռը և Հյուսիսային Ամերիկայի մասին

Բրիտանիայի օրենքը: Կանադայի գրադարանն ու արխիվները ստեղծվել են 2004թ.

Կանադայի ազգային գրադարանի և Կանադայի ազգային արխիվների կողմից

իրականացվող գործառույթների միավորման միջոցով և անմիջականորեն հաշվետու է
երկրի խորհրդարանին:

Գլուխ 3

Հայաստանյան գրադարաններ

Հայաստանի գրադարաններ: Հայաստանի գրադարանները բազմադարյան պատմություն ունեն: Միջնադարյան աղբյուրներում նրանք կոչվել են գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձատուն, մատենադարան, դիվան, երբեմն էլ՝ նշխարանոց, նշխարախուց: Եղել են վանքերին կից, երբեմն ունեցել են առանձին շինություն (Հաղպատ, Արգինա և այլն): Տարածված են եղել վանքերին մոտակա քարայրային գրապահոցները, որտեղ տեղավորվում էր հաճախ մեծ քանակությամբ գրականություն: Որոշ գրատներում գրադարակների դեր են կատարել որմնախորշերը: 10-րդ դարում հիմնված Սանահինի և Հաղպատի վանքերը 13-րդ դարում արդեն ճանաչված էին իրենց հարուստ գրադարաններով: Հայ գրքի կարևոր կենտրոններից է եղել նաև Տաթևի վանքի (9-րդ դարում) գրադարանները: Հայտնի են Արգինայի և Հռոմկլայի կաթողիկոսական (10-րդ դարում) և Անիի արքայական (11-րդ դարում) գրադարանները: Հիշատակություններ կան Կարսի արքայական, Հոռոմոս վանքի գրադարանի մասին:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հիմքը կազմող Էջմիածնի ձեռագրատունը հիմնվել է 5-րդ դարում և ընդմիջումներով իր գոյությունը շարունակել ողջ միջնադարում: Նշանավոր են եղել նաև Գետիկի վանքի, Գլաձորի, Գեղարդի, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի գրադարանները: Գրադարաններ են եղել Արճեշի Մեծոփա վանքում, Արցախում, Կիլիկիայում (Սկևռա, Գրազարկ), Երզնկայում, Վասպուրականում (Վարազա և Նարեկա վանքեր) և այլն: Հարուստ են եղել Կաֆայի (1366թվականից), Նոր Ջուղայի (17-րդ դար), Լիմ անապատի, Ամրդուլու վանքի գրադարանները: Մեզ են հասել Սաղմոսավանքի (կազմված 15-րդ դար) և Ամրդուլու վանքի (կազմված 17-րդ դար) գրացուցակները: Նախասովետական Հայաստանում աչքի էին ընկնում Երևանի արական և Հռիփսիմյան իզական գիմնազիաների, Երևանի թեմական հոգևոր դպրոցի գրադարանը: 1902 թվականին Երևանում բացվել է հասարակական գրադարան ընթերցարան, հետագայում ստեղծվել են մասնավոր գրադարաններ, որոնցից կարևոր էր Ավետիսյանի գրադարան ընթերցարանը: 1913 թվականին Հայաստանում կար 13 գրադարան՝ 9000 կտոր գրքով: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո բուռն զարգացում է ապրում գրադարանային գործը, քաղաքներում և գավառներում կազմավորվում են նոր գրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ: 1921 թվականին հիմնվեց հայկական ՍՍ

Ալ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարանը Երևանում (պաշտոնական բացումը՝ 1922 թվականին): 1921 թվականին կազմակերպվեց համալսարանի գրադարանը՝ Երևանի նախկին ուսուցչական սեմինարիայի ֆոնդերի հիման վրա: 1925 թվականին Հայաստանում կար 500 գրադարան:

1923 թվականից գործում է Խնկո Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանը, որը կոորդինացնում է բոլոր մանկական գրադարանների աշխատանքները: 1935 թվականին հիմնվեց Երևանի քաղաքային գրադարանը: Հայկական ՍՍՏ ԳԱ կենտրոնական գրադարանը հիմնադրվել է 1935 թվականին: 1946 թվականին Հայաստանում կար 1125 գրադարան՝ 909 հազար գրքային ֆոնդով, այդ թվում քաղաքային վայրերում՝ 124, գյուղական վայրերում՝ 784 գրադարան: Ստեղծվեց մասսայական, հանրապետական, գիտական, տեխնիկական, մանկական, արհմիութենական, դպրոցական գրադարանների հարուստ ցանց՝ միլիոնավոր գրքերի ֆոնդերով: 1975 թվականին ՏՄՍՍ-ում կար բոլոր տեսակի մոտ 3300 գրադարան (47600000 միավոր ֆոնդով), այդ թվում մասսայական՝ 1305, դպրոցական՝ 1442, տեխնիկական՝ 539: Միյուրբում գործում են հարյուրավոր հայկական գրադարաններ, որոնցից նշանավոր են Երուսաղեմի ձեռագրատունը, Վենետիկի և Վիեննայի Միխայիլյան մատենադարանները:

Հայաստանի Ազգային գրադարան: Հայաստանի Ազգային գրադարանը աշխարհի ամենախոշոր հայերեն գրականության պահոցն է: Հիմնադրվել է 1921 թվականին: Պաշտոնապես բացվել է 1922 թվականին: Գտնվում է Աբովյանի պուրակի հարևանությամբ, Տերյան 72 հասցեում: 2019 թ. մարտից գրադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը Հրաչյա Սարիբեկյանն է: Հայաստանի ազգային գրադարանի պատմության սկիզբը համարվում է 1832 թ., երբ հիմնադրվում է Երևանի Արական գիմնազիայի գրադարանը: Հայաստանի Մինիստրների խորհրդի նիստում ընդունված «Պետական հանրային մատենադարանի մասին» օրենքով գրադարանը ստանում է պետական գլխավոր գրադարանի կարգավիճակ: 1919-1921 թթ-ին գրադարանի առաջին տնօրեն Ստեփան Կանայանի ջանքերով հաջողվում է հավաքել, գնել և ժողովել Թիֆլիսի, Բաքվի, Ախալցխայի և Կարսի հայկական

կազմակերպությունների, ընկերությունների, ուսումնական հաստատությունների գրադարանները և դրանք տեղափոխել Երևան: Գրադարանը տեղավորված է 4 մասնաշենքում: Ամենահինը Ալ. Թամանյանի նախագծած գլխավոր մասնաշենքն է (1939 թ.): Թամանյանական մասնաշենքի կառուցումը ֆինանսավորել են Խորհրդային Հայաստանի կառավարությունը և «Գրիգոր և Կարապետ Մելքոնյան» հիմնադրամը: Այնուհետև շենքը հիմնանորոգվել է 2008-2011-ին՝ այս անգամ ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ:

Առաջին հավաքածուները, որոնց հիմքի վրա ձևավորվում են գրադարանի ֆոնդերը, հայ պետական, հասարակական և մշակութային գործիչներ Ալեքսանդր Մյասնիկյանի, Ն. Արդուրյանի, Բ. Ղորղանյանի, Լեոյի անձնական գրադարաններն էին, Ներսիսյան դպրոցի և այլ ազգային, մշակութային, ուսումնական հաստատությունների հավաքածուները:

1925-1990 թթ. գրադարանը կոչվել է Ալեքսանդր Մյասնիկյանի անունով, քանի որ վերջինս բավականին խոշոր ներդրում էր ունեցել գրադարանի կայացման գործում:

1982 թ.-ին հիմնադրման 150-ամյակի կապակցությամբ, գրադարանը պարզևատրվել է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

1999 թ.-ից հուլիսի 4-ը նշվում է որպես Հայաստանի Ազգային գրադարանի օր:

2012 թ.-ին լրացել է Հայաստանի Ազգային գրադարանի 180 և գրադարանի գրահրատարակչական գործունեության 75 ամյակները: Այժմ գրադարանում կա ավելի քան 7 միլիոն կտոր գիրք: Ամենահին գիրքն «Ուրբաթագիրք»-ն է: Այն առաջին հայկական տպագիր գիրքն է (Վենետիկ, 1512 թ.) և տպագրվել է Հակոբ Մեղապարտի կողմից: Բացի «Ուրբաթագիրք»-ից, գրադարանում պահպանվում են նաև Մեղապարտի կողմից տպագրված բազմաթիվ այլ գրքեր՝ Պատարագատետրը (պատճեն), Պարզատումարը, Տաղարանը, Աղթարքը (պատճեն):

Խնկո-Ապոր գրադարան: Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանը տեղեկատվական, մշակութային և կրթադաստիարակչական գործունեություն իրականացնող կազմակերպություն է: Այն գտնվում է Երևանում: Խնկո-Ապոր անվան

ազգային մանկական գրադարանը հիմնադրվել է 1933 թվականին՝ Ազգային գրադարանի մանկական գրականության ֆոնդի հիման վրա: 1935 թվականին՝ մանկագիր Խնկո-Ապոռ մահվանից հետո, ի հիշատակ նրա, գրադարանն անվանվել է «Խնկո-Ապոռ մանկական գրադարան»:

1979 թվականին համաշխարհային մանկական տարվա հռչակման առթիվ 1980 թվականին Խնկո-Ապոռ գրադարանին նոր շենք է տրամադրվել: Շենքն առանձնանում է ինքնատիպ ճարտարապետական ոճով (ճարտարապետներ՝ Լևոն Ղալումյան և Ռուզան Ալավերդյան):

Գրադարանն ունի 100 ընթերցողական տեղ ունեցող սրահ, գործում են «Իրանական» և «Գերմանական» ընթերցասրահներ, որոնք սպասարկում են ինչպես 3-ից 18 տարեկան երեխաներին, այնպես էլ մանկավարժներին: Գրադարանի հավաքածուի գրքերը, երաժշտական և օտարալեզու գրականությունն ու տեսալսողական նյութերը ընթերցողներին տրամադրվում են ըստ տարիքային առանձնահատկության տարանջատված սրահների առձեռն ֆոնդերի միջոցով: Էլեկտրոնային տեղեկատվության բաժնում ընթերցողը կարող է օգտվել համացանցի ռեսուրսներից:

Գրադարանը համագործակցում է Հայաստանում գործող մանկապատանեկան կրթամշակութային կազմակերպությունների հետ, գործում են տարբեր մանկական խմբակներ և ստուդիաներ, կազմակերպվում են մանկապատանեկան նորանոր միջոցառումներ՝ գրադարանը դարձնելով մայրաքաղաքի փոքրիկ բնակիչների հետաքրքիր ժամանցի, հանգստի կազմակերպման ու նոր գիտելիքների ձեռքբերման ցանկալի վայրերից մեկը: Գրադարանն ունի մոտ 0,5 միլիոն պահպանության միավորից բաղկացած հավաքածու՝ գրքեր, պարբերական մամուլ, տեսալսողական նյութեր, էլեկտրոնային տեղեկատվության միջոցներ:

Եզրակացություն

Գրադարանները շատ մեծ նշանակություն ունեն պատմության զարգացման և անցյալի ժառանգությունը ապագա սերունդներին փոխանցելու մեծ գործում: Գիրքը շարունակում է մնալ մեր ամենաճիշտ ուղեկիցը: Մակայն ժամանակի ընթացքում՝ համացանցի ստեղծմամբ, գրքերը ու գրադարանները զիջեցին իրենց տեղը նորագույն տեխնոլոգիաներին: Ուսումնասիրելով այլոց փորձը՝ ես հնարավորություն ունեցա ծանոթանալ շատ հին, բայց ժամանակի ընթացքում իրենց ուժը չկորցրած գրադարանների:

Ներկայում շատ մեծ տարածում են գտել էլեկտրոնային գրադարանները, որոնք և՛ հարամար են, և՛ գրավիչ իրենց ընձեռած լայն հնարավորություններով աշխարհում բնակվող միլիոնավոր ընթերցասերների: Այս ամենի հետ մեկտեղ, գտնվում են մարդիկ, որոնք գնահատում են գրադարանների մեծ դերը բոլորիս կյանքում և անում են ամեն ինչ, որպեսզի մարդիկ մշտապես այցելեն գրադարաններ ու միշտ մոտ լինեն դարերի ամենահզոր զենքին:

Ուսումնասիրելով նրանց փորձը՝ հասկանլի էր դառնում, որ ինչքան էլ տարբեր լինեն երկրների մշակույթները, գրքերն ու գրադարանները կարողանում են համախմբել բոլորին՝ ստեղծելով հզոր ժառանգություն:

Գրականության ցանկ*

Տպագիր աղբյուրներ

1. ՀՀ Մշակույթի նախարարության Խնկո Ապոբ ազգային մանկական գրադարան, «Հայտնի և անհայտ գրադարանավարներ, անվանի գարդարաններ», Երևան 2012, կազմող՝ Գայանե Կարապետյան, խմբագիր՝ Ներսես Հայրապետյան
2. Ռաֆայել Իշխանյան «Հայ գրքի պատմություն», հատոր 1, Երևան, Անտարես, 2012

Էլեկտրոնային աղբյուրներ

3. [Библиотеки в эпоху античности и в эпоху эллинизма](#)
4. [Վիքիդեպիա](#)
5. «Միսիթար Սեբաստացի» կրթահամալիրի [«Գրադարանավարի բլոգ»](#)

**Ցանկում ներկայացված են գրականության և տպագիր էլեկտրոնային աղբյուրները, որոնցից ազդեցություն է կրել աշխատանքը:*